ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստ

ք. Երևան 11 հունվարի 2019թ. Ժամը 11:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արչունց

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Թ. Զաքարյան Շ. Հարությունյան, Ա. Իսկանդարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
6. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

2.1 էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտերը ներկայացվել են էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով՝ մինչև հունվարի 09-ը, ժամը 11:00-ն: էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հունվարի 11-ին, ժամը 11:00-ին: Սահմանված ժամկետում «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել «Յուքոմ» ՍՊԸ և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ մասնակիցները:

3. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի (Դիմում-հայտարարություն) առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Յուքոմ» ՍՊԸ և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթուղթը՝ Դիմում-հայտարարություն, որը կազմվել և ներկայացվել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից հայտարարված Ինտերնետ կապի տրամադրման (այլընտրանքային կապ) ծառայության գնման ընթացակարգը բաղկացած է 1 չափաբաժնից: Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները՝

N	Մասնակիցներ	Նախահաշվային գին	ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ			ՀՀ դրամ		
			Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
Հանրային հեռախոսակապի ծառայություն								
1	«Յուքոմ» ՍՊԸ	**2 750 000**	2 500 000	500 000	3 000 000	500 000	100 000	**600 000**
2	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ	**2 750 000**	2 000 000	400 000	2 400 000	1 740 000	348 000	**2 088 000**

5. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

5.1 «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Յուքոմ» ՍՊԸ մասնակիցը՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

5.2 «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ մասնակիցը:

5.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

5.4 էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

6.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 5.3 և 5.4 կետերով նախատեսված փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Արչունց

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Թ. Զաքարյան

_____ Շ. Հարությունյան

_____ Ա. Իսկանդարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան